ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1, 1951 *Общественные науки*

Խ. Թարսեղյան

ԼԵՆԻՆՅԱՆ „ԻՍԿՐԱՆ"

(«Իսկրայի» առաջին համարի լույս ընծայման 50-ամյակի առթիվ)

1950 թվականի դեկտեմբերի 24-ին լրացավ լենինյան «Իսկրա» թերթի առաջին համարի լույս ընծայման 50-ամյակը։ Բոլշևիկյան պարտիայի և նրա մամուլի հերոսական պատմության մեջ արժանավոր տեղ ունի լենինյան «Իսկրան», որը նոր տիպի թերթ էր։ Լենինյան «Իսկրան» բացառիկ դեր է կատարել Ռուսաստանում մարքսիստական ռևոլուցիոն պարտիայի ստեղծման գործում, մշակել է բոլշևիկյան պարտիայի իդեոլոգիական և կազմակերպական հիմունքները, մարքսիստական պարտիայի ծրագիրը, ջախջախիչ հարված հասցրել ռուսական և միջազգային օպորտունիզմին, կոփել և դաստիարակել է պրոֆեսիոնալ ռևոլուցիոներների մի հերոսական սերունդ։

«Ռուսաստանի բանվորական մամուլի անցյալից» հոդվածում 1914 թվին Վ. Ի. Լենինը գրել է. «Բանվորական մամուլը Ռուսաստանում ունի գրեթե դարավոր պատմություն— սկզբում նախապատրաստական, այսինքն՝ ոչ բանվորական, ոչ պրոլետարական, այլ «ընդհանուր-դեմոկրատական», այսինքն՝ բուրժուական-դեմոկրատական ազատագրական շարժման պատմություն,— իսկ հետո պրոլետարական շարժման, պրոլետարական դեմոկրատիայի, կամ սոցիալ-դեմոկրատիայի իր սեփական, քսանամյա պատմությունը»։[1]

Բանվորական մամուլը Ռուսաստանում երևան եկավ անցյալ դարի 90-ական թվականների կեսերին, 1895—1896 թվերի Պետերբուրգյան հռչակավոր գործագուլների շրջանում։ Վ. Ի. Լենինը «Ռուսաստանի բանվորական մամուլի անցյալից» հոդվածում գրում է. «Հենց այդ ժամանակ էլ բառիս բուն իմաստով Ռուսաստանում բանվորական մամուլի երևան գալու ժամանակն է»։[2]

Աճող բանվորական շարժումը առաջադրեց նոր դրականության, մասսայական ռևոլուցիոն թռուցիկների, թերթերի, պրոկլամացիաների, կոչերի պահանջը։ Այդ գրականության սկիզբը դրեց Վ. Ի. Լենինը և նրա գլխավորած Պետերբուրգյան «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի Միությունը»։ Վ. Ի. Լենինը հիմք դրեց անցենզուր մամուլի բոլորովին մի նոր տիպի թերթիկների, որոնք անմիջական պատասխան էին տալիս բանվորներին հուզող բոլոր հարցերին։

1895 թվին «Պայքարի Միությունը» Վ. Ի. Լենինի գլխավորությամբ ձեռնարկում է իսկական բանվորական թերթի հրատարակումը։ Թերթի առաջին համարը ամբողջովին պատրաստել էր Լենինը։ Այն պետք է կոչվեր «Ռաբոչեե դելո», բայց 1895 թ. դեկտեմբերի 8-ի գիշերը ցարական ոստիկանները ձերբակալեցին Լենինին և «Պայքարի Միության» մյուս անդամներին, որի պատճառով թերթը լույս չտեսավ։ Վ. Ի. Լենինը իր «Ի՞նչ անել» հռչակավոր

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 306—307, 4-րդ հրատ. 1950 թ. (հայ. հրատ.)։
[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 301, 4-րդ հրատ. 1950 թ. (հայ. հրատ.)։

գրքում հանգամանորեն քննարկում է այդ թերթի հարցը և ցույց տալիս, որ նրա ուղղությունը միանգամայն պարզ է։ «Ռաբոչեե դելոն» «Իսկրայի» նախակարապետն էր։

1898 թվի մարտին Մինսկում հավաքված Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական պարտիայի (ՌՍԴԲՊ) առաջին համագումարը Կիևի սոցիալ-դեմոկրատների մի խմբի կողմից 1897 թվին բաց թողած «Ռաբոչայա գազետան» հայտարարեց պարտիայի կենտրոնական օրգան։ Բայց «Ռաբոչայա գազետայի» վերահրատարակումը չսկսվեց պարտիայի Կենտրոնական Կոմիտեի ձերբակալության հետևանքով։

Ռուսաստանում ռևոլուցիոն միասնական պարտիա ստեղծելու համար անհրաժեշտ էր ջախջախել «էկոնոմիստներին», սահմանազատվել օպորտունիստներից։ Միավորվելուց առաջ և միավորվելու համար անհրաժեշտ էր սկզբից վճռականորեն և որոշակի կերպով սահմանազատվել,— սովորեցնում էր Վ. Ի. Լենինը։

Վ. Ի. Լենինը պարտիայի կառուցման ելակետը համարում էր քաղաքական լրագրի հիմնումը։ «Մեր կարծիքով,— գրում էր Լենինը,— գործունեության ելակետը, մեր ցանկացած կազմակերպությունն ստեղծելու առաջին գործնական քայլը, վերջապես այն հիմնական թելը, որը բռնելով մենք կկարողանայինք անշեղորեն զարգացնել, խորացնել և ընդարձակել այդ կազմակերպությունը,— պետք է լինի Համառուսական քաղաքական լրագրի հիմնումը»։

Հենց այդպիսի լրագիրը հանդիսացավ լենինյան «Իսկրան»։

Ռևոլուցիոն շարժման վերելքի տարիներին, Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական պարտիայի կառուցման ընթացքում, 1900 թվի դեկտեմբերի 11-ին (24-ին) Լեյպցիգում[1] լույս է տեսնում լենինյան «Իսկրայի» առաջին համարը՝ «Կայծից բոց կբռնկի» բնաբանով։ Համառուսական քաղաքական լրագրի հանձարեղ պլանը Վ. Ի. Լենինը դեռևս մշակել էր աքսորում՝ «Մեր ծրագիրը», «Մեր մերձակա խնդիրները» և «Կենսական հարցը» հոդվածներում։

1900 թվին վերադառնալով Սիբիրի աքսորից, Լենինը խորհրդակցություններ է կազմակերպում Ուֆայում, Պսկովում, Մոսկվայում, Պետերբուրգում և այլ վայրերում, որտեղ տեղական ընկերներին ծանոթացնում է իր մշակած պլանի հետ, պարզաբանում թե ինչպես պետք է աշխատակցել թերթին և այն տարածել։ Ռուսաստանում համապատասխան աշխատանք կատարելուց հետո Վ. Ի. Լենինը մեկնեց արտասահման և հիմք դրեց «Իսկրային»։ «Իսկրայի» խմբագրության մեջ մտնում էին Վ. Ի. Լենինը, Գ. Վ. Պլեխանովը, Յու. Օ. Մարտովը, Պ. Բ. Ակսելրոդը, Ա. Ն. Պոտրեսովը, Վ. Ի. Զասուլիչը։ 1901 թվի գարնանից խմբագրության քարտուղարն է դառնում Ն. Կ. Կրուպսկայան։ «Իսկրայի» գլխավոր խմբագիրը և ղեկավարը Վ. Ի. Լենինն էր։ Նա էր ուժ ու ուղղություն տալիս թերթին։ Դրա համար էլ «Իսկրան» ամենայն իրավամբ կոչվում էր լենինյան «Իսկրա»։

Լենինյան «Իսկրայի» յուրաքանչյուր համարում լույս էին տեսնում Լենինի ղեկավար հոդվածները, որոնք տոգորված էին մարքսիստական տեսությամբ և սկզբունքայնությամբ։

«Իսկրայի» 1900 թվի առաջին համարի «Մեր շարժման կենսական խնդիր-

[1] «Իսկրայի» հաջորդ համարները լույս են տեսել Մյունխենում, իսկ 1902 թ. ապրիլից Լոնդոնում, 1903 թ. գարնանից Ժընևում։

նեռը» առաջնորդող հոդվածում Վ. Ի. Լենինը նշել է, որ ռուսական սոցիալ-դեմոկրատիայի մերձավորագույն քաղաքական խնդիրն է՝ ինքնակալության տապալումը, քաղաքական ազատության նվաճումը։ «Սոցիալ-դեմոկրատիան,— գրում է Վ. Ի. Լենինը,— բանվորական շարժման միացումն է սոցիալիզմի հետ, նրա խնդիրը ոչ թե բանվորական շարժմանը— նրա յուրաքանչյուր առանձին ստադիայում— պասսիվ կերպով ծառայելն է, այլ ընդհանուր առմամբ ամբողջ շարժման շահերի ներկայացուցչությունը հանդիսանալը, այդ շարժմանը նրա վերջին նպատակը, նրա քաղաքական խնդիրները ցույց տալը, նրա քաղաքական և գաղափարական ինքնուրույնությունը պահպանելը։ Սոցիալ-դեմոկրատիայից կտրված բանվորական շարժումը մանրանում է և անհրաժեշտորեն ընկնում բուրժուականության մեջ, միայն տնտեսական պայքար մղելով՝ բանվոր դասակարգը կորցնում է իր քաղաքական ինքնուրույնությունը, դառնում է այլ պարտիաների պոչը, դավաճանում է «բանվորների ազատագրումը բանվորների իսկ գործը պետք է լինի»[1] մեծ ավանդին»։[2]

Վ. Ի. Լենինը քննադատելով տարերային շարժումը, ցույց է տալիս նրա վնասակարությունը, կոչ է անում համախմբվել պարտիայի մեջ, որի գլխավոր խնդիրն էր համարում՝ նպաստել բանվոր դասակարգի քաղաքական կազմակերպմանը, վճռական կռիվ մղել ինքնակալության և ամբողջ կապիտալիստական հասարակության դեմ։ «Առանց այդպիսի կազմակերպության,— նախազգուշացնում էր Վ. Ի. Լենինը,— պրոլետարիատը ընդունակ չէ բարձրանալու մինչև գիտակցական դասակարգային կռվի աստիճանը, առանց այդպիսի կազմակերպության բանվորական շարժումը դատապարտված է անզորության... բանվոր դասակարգին... երբեք չի հաջողվի կատարել իր վրա դրված պատմական մեծ խնդիրը. այն է՝ ազատել իրեն և ամբողջ ռուս ժողովրդին նրա քաղաքական ու տնտեսական ստրկությունից»։[3] Լենինյան հռչակավոր խմբագրականը վերջանում է բանվոր ռևոլուցիոներ Պյոտր Ալեքսեևի հայտնի կանխատեսությամբ, թե «կբարձրանա միլիոնավոր բանվոր մարդկանց մկանոտ ձեռքը, և զինվորների ռվիններով պաշտպանված դեսպոտիզմի լուծը փոշեցրիվ կլինի»։[4]

Վ. Ի. Լենինը «Իսկրայի» էջերում և, մանավանդ իր «Ի՞նչ անել» նշանավոր գրքում անողոք կերպով ջախջախեց «էկոնոմիստներին» և ցույց տվեց, որ պարտիայի և բանվոր դասակարգի մերձավորագույն խնդիրն է՝ վերացնել ցարիզմը և դրանով իսկ ուղի բանալ դեպի սոցիալիզմը։ Լենինը մերկացրեց տարերայնության ջատագովներին, ցույց տվեց թեորիայի վիթխարի, ռևոլուցիոն ուժն ու նշանակությունը։ «Առանց ռևոլուցիոն թեորիայի,— ասում է Վ. Ի. Լենինը,— չի կարող լինել նաև ռևոլուցիոն շարժում։ Առաջավոր մարտիկի դերը կարող է կատարել միայն այն պարտիան, որը ղեկավարվում է առաջավոր թեորիայով»։[5]

---

1 Վ. Ի. Լենինը մեջ է բերում Կ. Մարքսի գրած «Բանվորների միջազգային ընկերության ընդհանուր կանոնագրության» (Առաջին ինտերնացիոնալի) հիմնական գրությունը (տես Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Երկեր, հ. 13, մ. 2, 1940 թ. ռուս. հրատ., էջ 684)։

2 «Իսկրա» 1900 թ., № 1, էջ առաջին, կամ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 4, էջ 472–473 (4-րդ հրատ. հայերեն)։

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 4, էջ 473 (4-րդ հրատ. հայերեն)։

4 Նույն տեղում, էջ՝ 477։

5 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 4, էջ 380։

6 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 4, էջ 380։

Վ. Ի. Լենինը ցույց տվեց, որ «էկոնոմիստները» խաբում են բանվոր դասակարգին, պնդելով, թե սոցիալիստական իդեոլոգիան կարող է ծագել բանվոր դասակարգի տարերային շարժումից։ «...Հարցը դրված է միմիայն այսպես,— գրում է Վ. Ի. Լենինը,— բուրժուական կամ սոցիալիստական իդեոլոգիա։ Այստեղ միջինը չկա... Ոստի սոցիալիստական իդեոլոգիայի ամեն մի նսեմացում, ամեն մի հեռացում նրանից՝ դրանով իսկ նշանակում է բուրժուական իդեոլոգիայի ուժեղացում»։[1]

Վ. Ի. Լենինը հանգեց այն եզրակացության, թե «էկոնոմիստները» ռեֆորմիստներ են, թե «էկոնոմիզմը» պատահական երևույթ չէ Ռուսաստանում, որ «էկոնոմիստները» բանվոր դասակարգի վրա բուրժուական ազդեցություն սարածողներ են, որ «նրանք արևմտաեվրոպական սոցիալ-դեմոկրատական պարտիաներում իրենց դաշնակիցներն ունեն ի դեմս ռևիզիոնիստների, օպորտունիստ Բերնշտեյնի կողմնակիցների»։[2]

Վ. Ի. Լենինը «Ինչի՞ց սկսել» հոդվածում և «Ի՞նչ անել» նշանավոր գրքում մշակելով և զարգացնելով նոր տիպի պարտիա ստեղծելու պլանը, ցույց տվեց, որ «լրագիրը ոչ միայն կոլեկտիվ պրոպագանդիստ է, և կոլեկտիվ ագիտատոր, այլև կոլեկտիվ կազմակերպիչ»։ Այն ժամանակ կարևոր խնդիր էր հանդիսանում «...համառուսական անլեգալ լրագրի ստեղծումը։ Ինչո՞ւ։ Այն պատճառով, որ այն ժամանակվա պայմաններում միայն համառուսական անլեգալ լրագրի միջոցով կարելի էր ստեղծել պարտիայի ներդաշնակ միջուկ, որն ընդունակ լիներ ի մի շաղկապելու անհամար խմբակներն ու կազմակերպությունները, նախապատրաստելու գաղափարային ու տակտիկական միասնականության պայմաններ և այդպիսով իսկական պարտիայի գոյացման հիմքը գծելու»։[3]

ՌՍԴԲՊ ծրագրի նախագծի մշակման ընթացքում «Իսկրայի» խմբագրության ներսում լուրջ տարաձայնություններ առաջացան Վ. Ի. Լենինի, Գ. Պլեխանովի և խմբագրության մյուս անդամների միջև։ Ի վերջո Լենինը հասավ այն բանին, որ ծրագրի նախագծի մեջ մտցվեց պրոլետարիատի դիկտատուրայի վերաբերյալ կարևորագույն կետը և հստակորեն մատնանշվեց բանվոր դասակարգի ղեկավար դերը ռևոլուցիայի մեջ։

«Իսկրան»,— գրում էին բանվորները այդ լրագրի խմբագրությանը,— առաջինը ցույց տվեց, մեզ բանվորներիս, որ մենք պետք է հետաքրքրվենք ոչ թե միայն բանվորական շարժումով, այլ նաև ամբողջ ժողովրդի և հասարակության կյանքով ու շարժումով։ «Իսկրան» առաջինը լսելի ձայնով ասաց, որ Ռուսաստանում ռևոլուցիայի մեջ կմասնակցեն բացի բանվորներից՝ նաև գյուղացիները և հասարակությունը։ «Մենք՝ բանվորներս, չենք կարող չարտահայտել խմբագրությանը մեր սրտագին շնորհակալությունը նրա համար, որ նա մեզ դուրս բերեց մտքերի ու հասկացողությունների նեղ շրջանից...»։[4]

«Իսկրան» նախապատրաստեց պարտիայի երկրորդ համագումարը, որը շրջադարձային կետ հանդիսացավ բանվորական շարժման մեջ։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 4, էջ 391—392 (ռուս. հրատ.)։

[2] ՀԱՄԿ(բ)Պ պատմություն, համառոտ դասընթաց, էջ 51, Հայպետհրատ, Երևան, 1946 թ.։

[3] Ի. Վ. Ստալին, «Լենինիզմի հարցերը», 1940 թ., Երևան, Քաղհրատ, էջ 82։

[4] «Իսկրա», № 14, հունվար, 1902 թ.։

«Իսկրայի» էջերում Վ. Ի. Լենինը մշակեց պրոլետարիատի պայքարի կարևորագույն տեսական ու տակտիկական պրոբլեմները։ Լենինյան «Իսկրայի» ամեն մի համարը արժեքավոր ավանդ է բոլշևիզմի գանձարանում։

Լենինյան «Իսկրան» սոցիալիզմը միացրեց բանվորական շարժման հետ, իր շուրջը համախմբեց բազմաթիվ խմբակներ ու կազմակերպություններ և նրանց բոլոր ջանքերն ուղղեց մի հիմնական նպատակի։ Այդպիսի միավորման համար, այսինքն «նախքան միանալը,— գրում էր Վ. Ի. Լենինը «Իսկրայի» խմբագրության անունից,— ձեռնամուխ լինելով թերթի հրատարակմանը,— և միանալու համար՝ մենք սկզբից պետք է վճռական կերպով և որոշակիորեն սահմանազատվենք»։[1]

«Իսկրան» այնպես ջախջախեց «էկոնոմիստներին», որ «էկոնոմիզմից» մնաց լոկ միայն տհաճ հիշողություն։

ՌՍԴԲՊ 2-րդ համագումարը, որը տեղի ունեցավ 1903 թվի հուլիսի 17 (30)-ին բարձր գնահատեց լենինյան «Իսկրայի» ծառայությունները։

Չնայած «Իսկրայի» խմբագրության ներսում եղած տարաձայնությունները սուր բնույթ ստացան համագումարում, բայց Լենինի առաջարկով «Իսկրայի» խմբագրության մեջ ընտրվեցին Լենինը, Պլեխանովը, Մարտովը։ Մարտովի առաջարկությունը այն մասին, թե «Իսկրայի» խմբագրական կազմում ընտրվեն հին բոլոր վեց խմբագիրները, որոնց մեծամասնությունը բաղկացած էր Մարտովի կողմնակիցներից, համագումարը ձայների մեծամասնությամբ մերժեց։ Երկրորդ համագումարից հետո մենշևիկներն է՛լ ավելի ուժեղացրին պայքարը բոլշևիկների դեմ, ամեն կերպ ձգտում էին վիժեցնել համագումարի որոշումները։ Մարտովը, դեմոնստրատիվ կերպով հրաժարվեց «Իսկրայի» խմբագրության մեջ մտնելուց. թերթի 45-ից մինչև 51 համարները խմբագրում էին Վ. Ի. Լենինը և Գ. Պլեխանովը։ Մարտովը և հուդա Տրոցկին գաղտնային հալածանք սկսեցին Վ. Ի. Լենինի նկատմամբ, սկսեցին լուտանք թափել բոլշևիկների հասցեին. դավաճանական տարրերի գլուխն անցած ամեն կերպ աշխատում էին վարկաբեկել և ձախողել երկրորդ համագումարի որոշումները։ Մենշևիկներին օգնեց Պլեխանովը. համագումարից հետո նա անցավ մենշևիկների կողմը։ «Պլեխանովին մենշևիկների կողմն էր քաշում նրա նախկին օպորտունիստական սխալների բեռը։ Պլեխանովը օպորտունիստ մենշևիկների նկատմամբ հաշտվողական լինելուց շուտով ինքը մենշևիկ դարձավ»։[2]

Պլեխանովը պահանջեց «Իսկրայի» խմբագրության մեջ մտցնել բոլոր հին մենշևիկ խմբագիրներին։ Լենինը չէր կարող համաձայնվել դրա հետ և դուրս եկավ խմբագրությունից, այն նպատակով, որ իր շուրջը համախմբի բոլշևիկներին պարտիայի կենտկոմում և այդ դիրքից հարվածի օպորտունիստներին։ Պլեխանովը միանձնաբար, խախտելով համագումարի կամքը, կոոպտացիայի կարգով «Իսկրայի» խմբագրության կազմի մեջ մտցրեց մենշևիկ նախկին խմբագիրներին։ Այդ մոմենտից՝ «Իսկրայի» 52-րդ համարից, մենշևիկները թերթը իրենց օրգանը դարձրին և սկսեցին «Իսկրայի» միջոցով իրենց օպորտունիստական հայացքները քարոզել։ Միանգամից այնպես փոխվեց թերթի դեմքը, որ պարտիայի մեջ սկսեցին խոսել հին «Իսկրայի» մասին, որպես

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 4, էջ 455 (4-րդ հրատ. հայերեն)։

[2] ՀԱՄ Կ(բ)Պ պատմություն, համառոտ դասընթաց, էջ 61, Հայպետհրատ, Երևան, 1946 թ.։

բոլշևիկյան թերթի մասին և նոր «Իսկրայի» մասին՝ որպես մենշևիկյան թերթի։

Վ. Ի. Լենինը իր «Մի քայլ առաջ, երկու քայլ հետ» գրքում խոսելով «Իսկրայի» մասին, գրել է. «Հին «Իսկրան» ռևոլուցիոն պայքարի ճշմարտություններ էր ուսուցում։ Նոր «Իսկրան» առօրեական իմաստություն է ուսուցում՝ զիջողականություն և համակերպություն։ Հին «Իսկրան» մարտնչող օրթոդոքսիայի օրգան էր։ Նոր «Իսկրան» հրամցնում է մեզ օպորտունիզմի զկոտոցը,— գլխավորապես կազմակերպական հարցերում։ Հին «Իսկրան» վաստակեց թե՛ ռուսական և թե՛ արևմտա-եվրոպական օպորտունիստների իր համար պատվավոր ատելությունը։ Նոր «Իսկրան» «խելոքացել է» և շուտով կդադարի իր հասցեին ծայրահեղ օպորտունիստների կողմից շռայլվող գովասանքներից ամաչելուց։ Հին «Իսկրան անշեղորեն գնում էր դեպի իր նպատակը, և նրա խոսքը չէր հակասում գործին։ Նոր «Իսկրայում» իր դիրքի ներքին կեղծությունն անխուսափելիորեն ծնում է —անկախ նույնիսկ որևէ մեկի կամքից ու գիտակցությունից— քաղաքական կեղծավորություն... Որպիսի՜ խայտառակություն։ Ինչպե՜ս խայտառակեցին նրանք մեր հին «Իսկրան»։

Հին «Իսկրայի» գործը շարունակեց բոլշևիկյան «Վպերյոդ» թերթը, որն անողոք կերպով պայքարում էր նոր «Իսկրայի» դեմ։

Հին «Իսկրայի» տրադիցիաները շարունակեցին և նոր, բարձր աստիճանի հասցրին բոլշևիկյան թերթերն ու հանդեսները։

* * *

Անդրկովկասում լենինյան «Իսկրայի» մարտական դիրքերի վրա առաջինը կանգնեցին ընկեր Ստալինը, և նրա մարտական զինակիցներ Լ. Կեցխովելին, Վ. Կուռնատովսկին, Մ. Կալինինը, Մ. Ցխակայան, Ս. Ծուլուկիձեն, Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Բ. Կնունյանցը, Ա. Ջափարիձեն, Մ. Ազիզբեկովը և ուրիշներ։

Ինչպես Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ամբողջ պատմությունը, Անդրկովկասի ռևոլուցիոն ամբողջ շարժումները, այնպես էլ լենինյան «Իսկրայի» ռևոլուցիոն սկզբունքների համար Անդրկովկասում մղված պայքարը՝ նրա ծնունդ առնելու առաջին իսկ օրից՝ անխզելիորեն կապված են ընկեր Ստալինի աշխատանքի և անվան հետ։ Անդրկովկասի՝ Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները ծագել և ձևակերպվել են Ռուսաստանի բանվորական ռևոլուցիոն շարժումների ազդեցությամբ և նրա հետ անմիջականորեն կապված։ Անցյալ դարի վերջին քառորդում կապիտալիզմը սկսում է արագորեն զարգանալ Անդրկովկասում։ Դրան զուգընթաց աճում են բանվորական շարժումները։ «Ռուսական կապիտալիզմը,— գրել է Վ. Ի. Լենինը,— այդպիսով Կովկասը ներգրավում էր համաշխարհային ապրանքային շրջանառության մեջ, համահարթում էր հինավուրց նահապետական ինքնամփոփվածության մնացորդ հանդիսացող նրա տեղական առանձնահատկությունները, իր գործարանների համար շուկա էր ստեղծում։ Հետռեֆորմյան ժամանակաշրջանի սկզբին նոսր բնակավորված, կամ լեռնականներով բնակավորված երկիրը, որոնք համաշխարհային տնտեսությունից և նույնիսկ պատմությունից դուրս էին կանգնած, դառնում էր նավթարդյունա-

[1] Վ. Ի. Լենին, Ընտիր երկեր, 2 հատորում, հ. 1., էջ 478, Պետհրատ, Երևան, 1948 թ.։

բերողների, գինու առևտուր անողների, ցորենի և ծխախոտի ֆաբրիկանտների երկիր...»։[1] Երկաթուղիների և առաջին ֆաբրիկաների երևան գալով, Կովկասում երևան եկավ նաև բանվոր դասակարգը։ Առանձնապես արագ զարգանում էր նավթային Բաքուն՝ Կովկասի արդյունաբերական և բանվորական խոշոր կենտրոնը։

Ընկեր Ստալինի ղեկավարությամբ Անդրկովկասում ստեղծվում են լենինյան-իսկրայական կազմակերպություններ, ծավալվում են մասսայական ռևոլուցիոն բանվորական շարժումները։ «1898—1900 թ. թ. ժամանակաշրջանում,— գրել է Լ. Բերիան,—առաջ եկավ ու ձևավորվեց Թիֆլիսի կազմակերպության ղեկավար կենտրոնական սոցիալ-դեմոկրատական խումբը... Թիֆլիսի կենտրոնական սոցիալ-դեմոկրատական խումբը հսկայական ռևոլուցիոն-պրոպագանդիստական ու կազմակերպական աշխատանք կատարեց անլեգալ սոցիալ-դեմոկրատական պարտիական կազմակերպություն ստեղծելու ուղղությամբ»։[2] Ընկեր Ստալինը գլխավորում էր այդ խումբը։ Ընկեր Ստալինը մինչև լենինյան «Իսկրան» «Պայքարի միության» օրինակով Անդրկովկասում բարձրացրել էր մարքսիզմի դրոշը, լայն թափ հաղորդել ռևոլուցիոն թերթիկների, պրոկլամացիաների ու կոչերի հրատարակությանը։ Հանձին Լենինի նա միանգամից տեսավ իսկական մարքսիստական պարտիա ստեղծողին, առաջնորդին և ուսուցչին։ «Մեսամե դասի»-ի փոքրամասնությունը ընկեր Ստալինի գլխավորությամբ դարձավ լենինյան իսկրայական ուղղության կորիզը Անդրկովկասում։ Երբ 1900 թվականի դեկտեմբերից սկսեց լույս տեսնել լենինյան «Իսկրան», ընկեր Ստալինը ամբողջովին կանգնեց նրա դիրքերի վրա, տոգորված անսահման հավատով դեպի Լենինի ռևոլուցիոն հանճարը՝ գնաց լենինյան ուղիով։ Թիֆլիսի երկաթուղայինների շրջանում ընկեր Ստալինը ստանում է իր մարտական առաջին մկրտությունը, այդ առաջավոր բանվորների մոտ անցնում է ռևոլուցիոն պրակտիկ աշխատանքի առաջին դպրոցը։ 1898 թվին Թիֆլիսի երկաթուղային արհեստանոցներում առաջին անգամ կազմակերպվում է խոշոր գործադուլ։ Հետագայում մինչև 1900 թվականը մի շարք խոշոր գործադուլներ են կազմակերպվում և անցկացվում Բոզարջյանի ֆաբրիկայում, ձիաքարշում, Ադիլխանովի կաշեգործարանում, տպարաններում և այլուր, կազմակերպվում են ընկեր Ստալինի գլխավորությամբ Թիֆլիսի բանվորների բազմաթիվ մայվկաներ և ցույցեր։

1900 թվին ընկեր Ստալինի ղեկավարությամբ Թիֆլիսի 400—500 բանվորներ տոնեցին մայիսմեկյան տոնը։ Նրանք հավաքվեցին Աղի լճի շրջանում՝ Մարքսի և Էնգելսի նկարներով և ռևոլուցիոն լոզունգներով։ Միտինգում բոցաշունչ ճառով հանդես եկավ ընկեր Ստալինը։ Վրաստանի և Անդրկովկասի ռևոլուցիոն շարժումների արշալույսին, ընկեր Ստալինի ղեկավարությամբ, Մ. Ի. Կալինինի ակտիվ մասնակցությամբ Թիֆլիսի երկաթուղայինները 1900 թվի օգոստոսի 14-ին քաղաքական գործադուլ արին։ Սարսափահար ցարական գործակալները արյունոտ դատաստան էին տեսնում գործադուլավորների նկատմամբ։ Ձերբակալված բանվորների կանայք կազմակերպեցին ցույց։ Դա Անդրկովկասում առաջին ցույցն էր կանանց կողմից։ Նրանց համարձակ ելույ-

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 771 (4-րդ հրատ. հայերեն)։

[2] Լ. Բերիա, Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը, էջ 21—22, 1941 թ. (հայ. հրատ.)։

թը է՛լ ավելի ոգևորեց գործադուլավորներին։ Գործադուլային կոմիտեն օգոստոսի 9-ին գործադուլավորներին դիմեց այսպիսի կոչով.

«Ընկերնե՛ր։ Մեզ ձերբակալում են այն պատճառով, որ մենք պահանջում ենք կատարել օրենքը,— նշանակում է կառավարությունը օրենքները հրատարակում է մեզ խաբելու, մեր աչքերին թոզ փչելու համար։

Մեզ ձերբակալում են այն պատճառով, որ մենք պահանջում ենք բարձրացնել ողորմելի աշխատավարձը,— նշանակում է կառավարությունն ուզում է, որպեսզի մենք վարենք կիսաքաղց, անասնական կյանք։

Մեզ ձերբակալում են այն պատճառով, որ մենք պահանջում ենք, որպեսզի մեզ հետ վարվեն ինչպես մարդկանց հետ,— նշանակում է կառավարությունը մեզ վրա նայում է ինչպես անասունների, որոնք քացի տալու իրավունք էլ չունեն։

Չմոռանաք այս բանը եղբայրնե՛ր։ Երբ կհասնի կառավարության հետ հաշիվ տեսնելու օրը, իսկ այդ օրը մոտիկ է, մենք հաշիվ կպահանջենք դրա համար»։[1]

Թիֆլիսի երկաթուղայինների 1900 թվի օգոստոսյան գործադուլը ցույց տվեց, որ Անդրկովկասյան բանվորներն ընկեր Ստալինի ջանքերի շնորհիվ լենինյան «Իսկրա» թերթի երևան գալու նախօրյակին քաղաքականապես հասունացել էին, և գիտակցում էին իրենց դասակարգային շահերը։ Երկաթուղայինների գործադուլը լայնորեն տարածվեց Անդրկովկասի շատ վայրերում ու ձեռնարկություններում։ Մեկ տարի չանցած, 1901 թվին Թիֆլիսի հերոսական պրոլետարիատը ընկեր Ստալինի գլխավորությամբ կազմակերպեց մայիսմեկյան նշանավոր ցույցը։

* * *

1900 թվի ամռանը աննկուն ռևոլուցիոներ Վիկտոր Կուռնատովսկին Թիֆլիս գալով սերտ կապեր է հաստատում «Մեսամե դասի»-ի ռևոլուցիոն փոքրամասնության հետ, դառնում է ընկեր Ստալինի լավագույն զինակիցն ու բարեկամը։ Թիֆլիսի կենտրոնական պարտիական խմբի քաղաքական-կազմակերպական աշխատանքը 1901 թվականին պսակվում է ՌՍԴԲՊ Թիֆլիսի լենինյան իսկրայական ուղղությամբ Կոմիտեի կազմակերպումով, իսկ 1901 թվի դեկտեմբերի 31-ին, ընկեր Ստալինի ղեկավարությամբ գլխավոր ձեռնարկությունների խմբակների ներկայացուցիչների ժողովում, ձևակերպվում է Բաթումիի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը։ Լենինյան «Իսկրայի ռևոլուցիոն սկզբունքների և սոցիալ-դեմոկրատիայի խնդիրների պարզաբանմամբ Բաթումիի կազմակերպությունների ժողովներում ու կոնֆերենցիայում փայլուն ճառերով հանդես է գալիս ընկեր Ստալինը։

«Այդպիսով,— գրել է Լ. Բերիան,— Բաթումի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը ստեղծել է ընկեր Ստալինը և նա է առաջինը Բաթումի բանվորներին ոտքի ճանել ռևոլուցիոն պայքարի՝ ընդդեմ ինքնակալության և կապիտալիզմի»։[2]

---

[1] Քաղվածքը բերված է «Ս. Հ.» 1950 թվի օգոստոսի 13-ի № 191 (8957)-ում տպագրված «Թիֆլիսի երկաթուղայինների հերոսական գործադուլի հիսնամյակը» հոդվածից։

[2] Լ. Բերիա, Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցը շուրջը, Հայպետհրատ, էջ 34, 1946։

Ընկեր Ստալինի մերձավորագույն զինակից Լադո Կեցխովելին Բաքվում ստեղծում է լենինյան իսկրայական ուղղության Կոմիտե և կազմակերպում է անլեգալ տպարան, որը պարտիական կոնսպիրատիվ գրականության մեջ հայտնի է «Նինա» անունով։ Այսպիսով, Անդրկովկասում ընկեր Ստալինի գլխավորությամբ պայքար է ծավալվում լենինյան «Իսկրայի» ռևոլուցիոն սկզբունքների համար։

Անլեգալ ռևոլուցիոն թերթի ստեղծման գաղափարը ընկեր Ստալինը և Լ. Կեցխովելին առաջադրել են դեռ 1898 թվին ռևոլուցիոն մարքսիզմի պրոպագանդայի և վրացական «Մեսամե դասի»-ի մեծամասնության ու նրանց «Կվալի» թերթի դեմ պայքարելու նպատակով։ Ընկեր Ստալինը, Լ. Կեցխովելու հետ միասին, առաջ քաշելով պարտիական անլեգալ մամուլ ստեղծելու հրատապ խնդիրը, 1900 թվին Բաթումիում, մի շարք պրոկլամացիաներ է տպագրում և տարածում։

Բաքվի ընդհատակյա «Նինա» տպարանի կազմակերպմամբ հնարավոր դարձավ Անդրկովկասում անլեգալ սոցիալ-դեմոկրատական լրագրի հրատարակման ստալինյան իդեայի իրականացումը («Նինան» գոյություն է ունեցել 1901 թվից մինչև 1905 թիվը)։ Այն հանդիսացել է բոլշևիկյան մամուլի պոլիգրաֆ հզոր բազան Անդրկովկասում։ Լ. Կեցխովելին, որպեսզի հենց ինքը լավ ուսումնասիրի տպագրական տեխնիկան, ծառայության է մտնում Թիֆլիսի տպարաններից մեկում և համառ աշխատանքով զգալի արդյունքների հասնում։ Թիֆլիսի այդ տպարանում էլ Կեցխովելին տպագրում է մի քանի պրոկլամացիաներ և բրոշյուրներ։ Աշխատելով Բաքվում, Կեցխովելին կապ է հաստատում Վ. Ի. Լենինի հետ և նրա առաջադրանքով սկսում բազմացնել «Իսկրան» և իսկրայական այլ հրատարակություններ։

Վ. Ի. Լենինը ջերմորեն ողջունում է Բաքվի խոշոր անլեգալ տպարանի կազմակերպումը, հետաքրքրվում է պարտիական այդ կարևոր գործի բոլոր մանրամասնություններով, դիրեկտիվներ, ցուցումներ տալիս։ Վ. Ի. Լենինը և Ն. Կ. Կրուպսկայան 1901 թվի սկզբին իրենց նամակներից մեկում այդ առթիվ գրում են. «Ձեզ մոտ կա՞ փորձված տպագրիչ։ Եթե այո՛, ապա կարելի է օգտվել մատրիցաներից, որոնք հեշտ է ուղարկել... Հաղորդեցեք, ի՞նչ ֆորմատի է Ձեր մեքենան։ Կարելի՞ է արդյոք տպել մեր «Իսկրա»-յի ֆորմատով։ Առհասարակ որքան կարելի է շուտ ուղարկեցեք Ձեր աշխատանքի գեթ որևէ մեկ նմուշ։ Եթե ձեզ մոտ տեխնիկան կարգավորված է, աշխատեցեք որքան կարելի է շուտ ամբողջովին հրատարակել «Իսկրա»-յի գեթ մեկ համար...»[1]

Անդրկովկասի բոլշևիկները սրբությամբ իրականացնում են լենինյան ցուցումները։ Բաքվի տպարանում տպագրվում են ստալինյան «Բրձոլա» («Պայքար»), լենինյան «Իսկրա» թերթերը, Մարքսի, Էնգելսի, Լենինի աշխատությունները, այդ թվում Վ. Ի. Լենինի «Ի՞նչ անել» գիրքը, ինչպես նաև Բաքվի Կոմիտեի բազմաթիվ պրոկլամացիաներ ու կոչեր։

«Իսկրայի» հրատարակությունները արտասահմանից Ռուսաստան էին փոխադրվում Վիեննա—Թավրիզ—Բաքու գծով և ապա դեպի Հարավային Ռուսաստան»։[2]

---

[1] Ленинский сборник VIII, стр. 188—189.

[2] Մ. Բաղիրով, Բաքվի և Ադրբեջանի բոլշևիկյան կազմակերպության պատմությունից, Հայպետհրատ, Երևան, 1944 թ., էջ 24։

1901 թվի սեպտեմբերին ընկեր Ստալինի և Լ. Կեցխովելու նախաձեռնությամբ Բաքվում լույս է տեսնում Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատիայի օրգան «Բրձոլա» («Պայքար») թերթի առաջին համարը, որը հետևողականորեն կիրառում էր լենինյան «Իսկրա»-յի գաղափարները։ «Բրձոլա» թերթը Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության, նրա, լենինյան իսկրայական խմբի առաջին անլեգալ լրագիրն էր, որին ակտիվորեն աշխատակցում էին ընկեր Ստալինը, ընկ. ընկ. Բոնդորիշվիլին, Կեցխովելին, Ծուլուկիձեն, Վանո Բոլկվաձեն։ «Բրձոլան» պաշտպանում էր լենինյան «Իսկրայի» ռևոլուցիոն սկզբունքները, մարքսիզմի թեորիական հիմքերը, պրոլետարիատի դասակարգային պայքարի խնդիրները։

«Բրձոլան» իրեն համարում էր համառուսաստանյան սոցիալ-դեմոկրատական շարժման տեղական օրգանը, պաշտպանելով Անդրկովկասի պրոլետարիատի ռևոլուցիոն պայքարի անխզելի կապն ամբողջ Ռուսաստանի բանվոր դասակարգի ռևոլուցիոն պայքարի հետ։

«Ռևոլուցիոն մարքսիզմի գաղափարների լայն քաղաքական ագիտացիայի ու պրոպագանդայի հիման վրա միասնական ռևոլուցիոն պարտիա կազմակերպելու վերաբերյալ «Իսկրա» թերթի գաղափարը «Բրձոլա» թերթը դարձրեց իր ղեկավար սկզբունքը»։[1]

«Բրձոլա»-յի առաջին համարի (1901 թվի սեպտեմբերի) «Խմբագրության կողմից» խորագրով առաջնորդողը գրել է Ի. Վ. Ստալինը։ Բնորոշելով թերթի խնդիրները, ընկեր Ստալինը նշել է.

«Վրացերեն սոցիալ-դեմոկրատական թերթը պետք է պարզորոշ պատասխան տա բանվորական շարժման հետ կապված բոլոր հարցերին, պարզաբանի սկզբունքային հարցերը, թեորետիկորեն պարզաբանի բանվոր դասակարգի դերը պայքարում և գիտական սոցիալիզմի լույսով լուսավորի յուրաքանչյուր երևույթ, որին բախվում է բանվորը»։[2]

Ընկեր Ստալինը «Խմբագրության կողմից» առաջնորդողում մատնանշում է, որ թերթը պետք է գլխավորի բանվորական շարժումը, հնարավորին չափ մոտ կանգնի բանվորական մասսային, հնարավորություն ունենա մշտապես ազդելու նրա վրա, լինելու նրա գիտակից և ղեկավար կենտրոնը։

«Բրձոլան» առաջին իսկ համարից վճռաբար պաշտպանում և պրոպագանդում է Ռուսաստանի ռևոլուցիոն շարժման մեջ պրոլետարիատի հեգեմոնիայի լենինյան «Իսկրա»-յի իդեաները, Անդրկովկասի բազմազգ ժողովուրդների մեջ ամրապնդում ինտերնացիոնալիզմի գաղափարները։

«Բրձոլա» թերթի № 2—3-ում (նոյեմբեր-դեկտեմբեր 1901 թ.) տպագրված «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական պարտիան և նրա մերձավորագույն խնդիրները» խորագրով հոդվածում, ընկեր Ստալինը պաշտպանում է լենինյան հայացքները միասնական մարքսիստական պարտիայի ստեղծման գործում։

Լենինյան «Իսկրան» ջերմորեն ողջունեց այդ մարտական օրգանը։ «Իսկրայի» 1901 թ. դեկտեմբերի 20-ի № 13-ում լույս տեսած «Ռուսական սվինի հարյուր տարին Վրաստանում» հոդվածում նշվում է.

«...Տեղական բանվորական կազմակերպությունը հարյուրամյակը նշա-

[1] Լ. Պ. Բերիա, Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը, Հայպետհրատ, 1948 թ., էջ 44։

[2] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 1-ին, էջ 9—10 (հայ. հրատ.)։

նավորեց լույս ընծայելով առաջին ռևոլուցիոն վրացական պարբերական հրատարակությունը «Պայքար» անունով։ Այդ օրգանը ենթադրվում է լույս ընծայել ըստ նյութի կատարման՝ բուրժուազիայի և ժանդարմերիայի դեմ տեղական բանվորական կազմակերպության մղած պայքարից վերցրած փաստերի ձևով։ Առաջին համարը իր մեջ պարունակում էր սկզբունքային բնույթի մի քանի հոդվածներ, պրոկլամացիաներ և Կովկասում (առանձնապես Թիֆլիսում) տեղի ունեցած գործադուլների խրոնոլոգիան»։[1]

«Բրձոլա»-յի առաջին համարի մասին «Իսկրան» 1902 թվի տեպտեմբերի 28-ին (15) «Թիֆլիս» խորագրով թղթակցության մեջ գրում է. «Երևան եկան վրացերեն լեզվով մի լրագիր («Պայքար») և մի քանի թարգմանած բրոշյուրներ։ Հրաշալի գրված պրոկլամացիաները լույս տեսան ռուսերեն, վրացերեն և հայերեն լեզուներով և լցրին Թիֆլիսի բոլոր թաղամասերը»։

Ստալինյան «Բրձոլայի» գաղափարները հասնում էին Անդրկովկասի բանվորական մասսաներին։ Բանվորները խորը սիրով այդ թերթը անվանում էին «ճշմարտության քարոզիչ», «վսեմ գաղափարների արտահայտիչ», «ուղեցույց աստղ», «հարստահարված ժողովրդի լուսավորիչ»։ «Բրձոլայի» հետ միասին լույս տեսան «Բրձոլիս փուրցլիս» («Բրձոլայի թերթիկ») և երկու համար «Ձվենի կիտիվեբի» («Մեր հարցերը») նվիրված բանվորական շարժումներին։

Ցարական իշխանությունը Բաքվի և Անդրկովկասի հերոսական պրոլետարիատի և նրա առաջնորդների նկատմամբ գործադրում է ամենադաժան ու տմարդի տեռոր։ 1902 թվի մայիսմեկյան ցույցից հետո ՌՍԴԲՊ Բաքվի կազմակերպության ակտիվիստների և առաջավոր բանվորների մասսայական ձերբակալություններ կատարվեցին։

Ոստիկանական հետախույզները տենդագին եռանդով փնտրում էին Բաքվի ընդհատակյա տպարանը։ Բայց Լ. Կեցխովելին այնքան վարպետորեն էր քողարկել այն, որ երկար ժամանակ ժանդարմները նույնիսկ չգիտեին, թե նա գտնվում է Բաքվում։

Թիֆլիսի նահանգական ժանդարմական վարչության պետը, որը Կեցխովելուն բռնելու համար Բաքու էր ուղարկել հատուկ գործակալներ, չնայած բոլոր ջանքերին, հարկադրված էր 1902 թ. մարտի 30-ին խոստովանել, որ «բոլոր պրոկլամացիաները, վրացական ընդհատակյա-ժուռնալ «Բրձոլան», որը հայտնվել է անցած տարվա վերջին, և նույնիսկ հենց ինքը՝ «Իսկրա» լրագիրը տպագրվում են Բաքու քաղաքում... Ինչ վերաբերում է այն հարցին, թե Բաքվում որտեղ է հենց տեղավորված տպարանը, ապա այդ առթիվ ոչ մի հաստատ բան դեռ չի կարելի ասել»։[2]

Բաքվի «Նինա» տպարանը երկար ժամանակ չէր հայտնաբերվի, եթե տեղի չունենար 1901 թ. դեկտեմբերի 31-ի դեպքը, երբ Բաքվի մաքսատանը տեղափոխման ժամանակ ջարդվեց կրկնակի հատակով մի արկղ, որի միջից թափվեցին «Իսկրայի» հոկտեմբեր-նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համարների 19 կլիշեները։ Դրանից հետո ժանդարմները լիովին հասկացան, որ Բաքվում է գտնվում ընդհատակյա տպարանը և սկսեցին խուզարկել ու փնտրել այն։ Ընդհատակյա տպարանը գտնելու համար Թիֆլիսից Բաքու մեկնեց ոստիկանական փորձված մի հետախույզ՝ Լավրովը։ Վտանգը ծանրացավ։ Լ.

---

[1] «Իսկրա», 1901 թ., № 13։

[2] Լադո Կեցխովելի, Ժողովածու, էջ 71, 1938 թ.։

Կեցխովելին 1902 թ. ապրիլին Բաքվից մեկնեց, նպատակ ունենալով տպարանը փրկելու համար այն փոխադրել Ռուսաստան։

«Իսկրա» թերթի քարտուղար, Լենինի հավատարիմ ընկեր Ն. Կրուպսկայան Սամարայի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությանը 1902 թ. մայիսի 6-ին հաղորդում է.

«Ձիերը արձագանքեցին։[1]

Տպարանը... անվնաս է, բայց առ այժմ չի աշխատում։ Նրա տերը գնացել է Ռուսաստան բանակցությունների համար... Ձեր հասցեն ես տվի ձիերին... Նրանց խնդրեցի շուտով ձեզ հաղորդել հասցեն՝ ներկայանալու և Բաթումի հետ կապ հաստատելու։ Աշխատեցեք տեանվել և պայմանավորվել Նինայի հոր[3] հետ»։[4]

Ոստիկանական տեռորի պայմաններում հնարավոր չեղավ տպարանը փոխադրել։ Լ. Կեցխովելին, Բաքու վերադառնալով, հաշվի առնելով ստեղծված իրադրությունը, տպարանը փոխադրում է Զադրովայա փողոցի վրա գտնվող մի ուրիշ, ավելի անվտանգ շենք։ Բայց 1902 թ. սեպտեմբերի 2-ին Լ. Կեցխովելին բանտարկվեց, որին 1903 թ. օգոստոսի 17-ին ցարական դահիճները գազանաբար սպանեցին։

Ոստիկանական լկտի գործողությունները երբեք չէին ընկճում Բաքվի ռևոլուցիոներների կամքը, «Նինան» և Բաքվի Կոմիտեի մյուս տպարանները շարունակում էին գործել։ «...Նինան,— գրում էր Կրուպսկայան,— աշխատում է ամբողջ թափով...»։[5] Նոր շենքում «Նինա» տպարանը «Իսկրայի» խմբագրության օգնությամբ կահավորվեց, արտասահմանից ստացվեց տպագրական նոր մեքենա, իսկ հինը ընկեր Ստալինի ցուցումով, փոխադրվեց Թիֆլիս և հանձնվեց Հավլաբարի նշանավոր տպարանին։

Իր գոյության ընթացքում Բաքվի տպարանը հրատարակեց ավելի քան մեկ միլիոն օրինակ զանազան գրականություն։ Դրանք բոլորը տոգորված էին Լենինյան «Իսկրայի» գաղափարներով։

Անդրկովկասի ռևոլուցիոն ուժերի համախմբման գործում բացառիկ կարևոր դեր խաղաց 1903 թվի մարտի սկզբներին տեղի ունեցած Կովկասյան սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջին համագումարը, որտեղ ձևակերպվում է ՌՍԴԲՊ Կովկասյան Միությունը, որը և կանգնած էր Լենինյան «Իսկրայի» դիրքերում։ Ընկեր Ստալինը, որ բանտարկված էր, բացակա կերպով ընտրվում է ՌՍԴԲՊ Կովկասյան Միութենական կոմիտեի կազմում։ Ղեկավարելով Անդրկովկասի բազմազգ աշխատավորական մասսաների պայքարը, ընկեր Ստալինը Լենինյան իսկրայական կազմակերպությունները կառուցում էր իսկական ինտերնացիոնալիզմի հիմունքներով։ Հենց պրոլետարական ինտերնացիոնալիզմի այդ սկզբունքներն էլ հանդիսանում են բոլշևիկյան կազմակերպությունների կազմակերպական կառուցվածքի հիմքը։ Ընկեր Ստալինը 1913 թվին «Նացիոնալիզմի ուղիով» հոդվածում այդ առթիվ գրել է.

«Իրենց երևան գալու հենց սկզբից (90-ական թվականների սկիզբը) Կովկասի կազմակերպությունները խիստ ինտերնացիոնալ բնույթ էին կրում։ Թշնամի-

---

[1] Բաքվի իսկրայական ՍԴ խմբի կոնսպիրատիվ անունը։
[2] Լադո Կեցխովելին։
[3] Լադո Կեցխովելին։
[4] Ленинский сборник VIII, стр. 233.
[5] Նույն տեղում, էջ 341։

ների դեմ համերաշխ պայքար մղող վրացի, ռուս, հայ և մուսուլման բանվորների միասնական կազմակերպություն,— այս էր պարտիական կյանքի պատկերը... 1903 թվականին, Կովկասյան (իսկապես՝ Անդրկովկասյան) Ս.-Դ. կազմակերպությունների առաջին հիմնադիր համագումարում, որը Կովկասյան Միության սկիզբը դրեց, կազմակերպության կառուցման ինտերնացիոնալ սկզբունքը նորից հռչակվեց, որպես միակ ճիշտ սկզբունք։ Այդ ժամանակից Կովկասյան սոցիալ-դեմոկրատիան աճել է նացիոնալիզմի դեմ մղած պայքարում»։[1]

Անդրկովկասի բոլշևիկները ընկեր Ստալինի առաջնորդությամբ ղեկավարվելով լենինյան «Իսկրայի» ռևոլուցիոն սկզբունքներով, հաջողությամբ են իրականացնում պրոլետարիատի հեգեմոնիայի, ազգային հարցի, գյուղացիությանը որպես պրոլետարիատի դաշնակցի վերաբերյալ լենինյան ուսմունքը, բոլոր ազգությունների աշխատավոր մասսաներին ոտքի են հանում պայքարելու ընդհանուր թշնամու՝ ինքնակալության ու կապիտալիզմի դեմ։

Վ. Ի. Լենինը մատնանշելով ընկեր Ստալինի աշխատանքի սքանչելի արդյունքները Անդրկովկասում ազգային հարցը լուծելու ասպարեզում, 1913 թ. գրել է. «Մեզ մոտ Կովկասում Ս.-Դ. վրացիները + հայերը + թաթարները + + ռուսները միասին, միասնական Ս.-Դ. կազմակերպության մեջ աշխատում էին տասը տարուց ավելի։ Սա ոչ թե ֆրազ է, այլ ազգային հարցի պրոլետարական լուծում։ Միակ լուծումը»։[2]

* * *

Անդրկովկասում լենինյան «Իսկրայի» ռևոլուցիոն սկզբունքների համար մղված պայքարի ընթացքում, ընկեր Ստալինը գլխավորել է Կովկասյան բոլշևիկների ամբողջ գաղափարական-քաղաքական պայքարը՝ մենշևիկների, էսէռների, նացիոնալիստների, օպորտունիստների, անարխիստների դեմ։ Այդ պայքարում բոլշևիկների ամենաուժեղ զենքը պարտիական գրականությունն էր։ Ընկեր Ստալինը Կովկասի բոլշևիկյան բոլոր հրատարակությունների կազմակերպիչը, ոգեշնչողն ու նախաձեռնողն է եղել։ Լենինյան «Իսկրայի» գաղափարների հաղթանակը ապահովելու նպատակով, ընկեր Ստալինը ցարական Ռուսաստանի ծանր պայմաններում մեծ թափ է հաղորդում անլեգալ գրքերի, թերթերի, բրոշյուրների հրատարակմանը։

Քութայիսիի բանտից ընկեր Ստալինը ՌՍԴԲՊ Կովկասյան Միութենական Կոմիտեին ցուցում տվեց՝ Թիֆլիսում կազմակերպել ընդհատակյա հզոր տպարան, որը մասսայական տիրաժով տպագրեր պարտիական գրականություն։ ՌՍԴԲՊ Կովկասյան Միությունը ղեկավարվելով ընկեր Ստալինի ցուցումներով, երևելի ձեռնարկում և բոլշևիկյան ընդհատակի աչքի ընկնող օրինակ տվեց, 1903 թվին Թիֆլիսում կազմակերպելով Հավլաբարի գաղտնի տպարանը, որը գործեց մինչև 1906 թիվը։ Ընկեր Ստալինի ցուցումներով Հավլաբարի տպարանում առաջին անգամ վրացերեն և հայերեն լեզուներով տպագրվեցին Վ. Ի. Լենինի՝ «Գյուղական չքավորությանը», «Պրոլետարիատի և գյուղացիության ռևոլուցիոն դեմոկրատական դիկտատուրան» բրոշյուրները և այլ գործեր։ Այդ տպարանումն են տպագրվել Ի. Վ. Ստալինի մի ամբողջ շարք կարևորագույն երկեր, այդ թվում՝ «Համառոտակի պարտիական տարաձայ-

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հ. 2, էջ 335—336 (հայ. հրատ.)։
[2] В. И. Ленин, Том XVI, стр. 328.

նությունների մասին», «Երկու գոտեմարտ» բրոշյուրները՝ ռուսերեն, վրացերեն և հայերեն լեզուներով։

Կովկասում բոլշևիզմի դիրքերի պաշտպանության գործում Լենինի և լենինյան «Իսկրայի» գաղափարների պրոպագանդման ու զարգացման գործում վճռական դեր է կատարել ընկեր Ստալինի խմբագրությամբ լույս տեսած ՌՍԴՐՊ Կովկասյան Միության օրգան «Պրոլետարիատիս բրձոլա»-ն («Պրոլետարիատի կռիվը»)։ ՌՍԴՐՊ Կովկասյան Միության առաջին համագումարի որոշմամբ վրացական «Բրձոլա» և հայկական «Պրոլետարիատ» թերթերը միավորվեցին և սկսեց լույս տեսնել «Պրոլետարիատիս բրձոլա»-ն վրացերեն և հայերեն լեզուներով։ Իսկ 1905 թվից լույս էր տեսնում նաև ռուսերեն լեզվով։ Թերթը խմբագրում էին Ի. Վ. Ստալինը, Ստ. Շահումյանը և Ս. Ծուլուկիձեն։

«Բրձոլայի» արժանավոր հաջորդ «Պրոլետարիատիս բրձոլա»-ն պարտիայի լենինյան կենտրոնական օրգան «Պրոլետարիից» հետո լավագույն և ամենախոշոր բոլշևիկյան թերթն էր։ «Թերթի համարյա յուրաքանչյուր համարում տպագրվում էին Լենինի հոդվածները «Պրոլետարիից»։ Կարևորագույն շատ հոդվածներ Ստալինն է գրել։ Այդ հոդվածներում Ստալինը հանդես է գալիս որպես տաղանդավոր բանավիճող, որպես պարտիայի խոշորագույն գրական և թեորետիկ ուժ, պրոլետարիատի քաղաքական առաջնորդ, Լենինի հավատարիմ հետևորդ»։[1]

«Պրոլետարիատիս բրձոլան» հաճախ նյութեր էր արտատպում լենինյան «Իսկրայից», «Վպերիոդից», «Պրոլետարից»։ «Պրոլետար»-ի № 12-ում «Պրոլետարիատի պայքար» թերթի ռուսերեն լեզվով հրատարակված № 1-ի առթիվ ասված է.

«Մենք դեռ առիթ կունենանք անդրադառնալ այս հետաքրքիր թերթի բովանդակությանը։ Ջերմագին ողջունում ենք Կովկասյան Միության հրատարակչական գործունեության ընդարձակումը և նրան հետագա հաջողություններ ենք ցանկանում Կովկասում պարտիականությունը վերականգնելու գործում»։

Իսկ Ն. Կ. Կրուպսկայան Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ ՌՍԴՐՊ Թիֆլիսի Կոմիտեին գրել է. «...«Պրոլետարիատի պայքարը» ստացանք, սքանչելի տպավորություն է թողնում։ Այ թե խայտառակվեցին Թիֆլիսի մենշևիկները՝ Ռուլիգինյան միսիայով հանդերձ»։

Այսպիսով, լենինյան «Իսկրայի» ռևոլուցիոն սկզբունքների պաշտպանության գործում նշանավոր ավանդ են մտցրել ընկեր Ստալինի անմիջական ջանքերով ստեղծված «Բրձոլա», «Պրոլետարիատիս բրձոլա», «Ախալի ցխովրեբա» («Նոր կյանք»), «Ախալի դրոեբա» («Նոր ժամանակ»), «Ջվենի ցխովրեբա» («Մեր կյանքը), «Դրո» («Ժամանակ»), «Բակինսկի ռաբոչի», «Գուդոկ», «Կայծ», «Նոր խոսք» (հայերեն), «Կոչ-Դեվեթ» և այլ թերթեր։

1901—1907 թ. թ. ժամանակաշրջանում գրված երկերում ընկեր Ստալինը պայքար է ծավալում զանազան հակամարքսիստական և օպորտունիստական հոսանքների դեմ, կռում և կոփում է Անդրկովկասի լենինյան իսկրայական կազմակերպությունները։ «Համառոտակի պարտիական տարաձայնությունների մասին», «Պատասխան սոցիալ-դեմոկրատին» և այլ հոդվածներում ընկեր Ստալինը հանդես է եկել մարքսիստական պարտիայի իդեոլոգիական

[1] Ի. Վ. Ստալին, Համառոտ կենսագրություն, Հայպետհրատ, 1947 թ., էջ 27—28։

հիմունքների վճռական պաշտպանությամբ։ «Պարտիայից», «Նամակներ Կովկասից» աշխատություններում ընկեր Ստալինը զարգացնելով լենինյան «Իսկրայի» սկզբունքները, տալիս է պարտիական կազմակերպությունների վիճակը, վճռական հարվածներ է հասցնում օտզովիզմին, ուլտիմատիզմին և լիկվիդատորությանը, առաջադրում պարտիայում եղած ճգնաժամի հաղթահարման պլանը։

* * *

Լենինյան «Իսկրան» լայնորեն լուսաբանում էր Անդրկովկասի աշխատավորների կյանքը։ 1901 թվի մայիսին «Իսկրան» հաղորդեց, որ գործադուլը համակել է Բաքվի նավթահանքերը և Բաքվի նահանգապետը Աստրախանի նահանգապետին հեռագրել է. որ «անհրաժեշտ է կասեցնել գործազուրկների հոսքը դեպի Բաքու։ Նույն համարում զետեղված է առաջին հիշատակությունը Թիֆլիսի պրոլետարիատի մայիսմեկյան քաղաքական ցույցի մասին։ Հաջորդ համարում պատմվում է, թե Թիֆլիսի բանվորները տանում էին կարմիր դրոշ, որի վրա փակցված էին Մարքսի, Էնգելսի դիմանկարները հետևյալ մակագրությամբ՝ «Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք»։ «Իսկրայի» հաջորդ համարում, արդեն Թիֆլիսից ստացված ինֆորմացիայում տրվում է ցույցի մանրամասն նկարագիրը։

1901 թվի նոյեմբերի վերջերին ընկեր Ստալինը ՌՍԴԲՊ Թիֆլիսի Կոմիտեի հանձնարարությամբ տեղափոխվում է Բաքու պարտիական-պրոպագանդիստական ռևոլուցիոն աշխատանք կատարելու։ Բաքվի բոլշևիկները, ընկեր Ստալինի ղեկավարությամբ, կարճ ժամանակամիջոցում Բաքուն դարձրին բոլշևիզմի միջնաբերդը։ Բոլշևիկյան մամուլը օգնեց սոցիալիզմը բանվորական շարժման հետ միացնելու գործին, օգնեց բոլշևիկներին՝ Բաքվի բանվոր դասակարգը և ամբողջ Անդրկովկասի աշխատավորությանը ինքնակալության դեմ դրոհի դուրս բերելու համար։

1902 թվին «Իսկրան» հաղորդեց Բաքվի բանվորների մայիսմեկյան վիթխարի ցույցի մասին։ «Իսկրան» Բաքվի բանվորների սիրելի թերթը դարձավ։ 1902 թվին Բաքվի բանվորները «Իսկրայի» 22-րդ համարում գրում էին.

«Մենք, Բաքվի բանվորներս, մյուս քաղաքների բանվորներից ետ չմնալու համար, միասին որոշեցինք առաջին քայլը կատարել սուրբ գործի համար... Մենք հիշում ենք դեկաբրիստների պատասխանը Պուշկինին «Կայծից բոց կբռնկի...»։ Սակայն ուժեղ բոց բորբոքելու համար պետք է մեր կայծերը տարածել ամբողջ քաղաքով մեկ, որպեսզի մեծ հրդեհ առաջանա»։

«Իսկրայի» 1902 թվի հուլիսյան համարներից մեկում Բաքվի պրոլետարիատի մայիսմեկյան քաղաքական ցույցի նկարագրությանը նվիրված հոդվածը վերջանում էր հետևյալ տողերով. «Այժմ շատ բանվորներ խնդրում են իրենց տալ այնպիսի մարդիկ, որոնք պարզաբանեն դրությունը։ Շատերն անհամբեր սպասում են նոր ցույցի, և մեր մեծ ուսուցիչ Մարքսի «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» խոսքերը դրոշմվել են բոլոր բանվորների սրտում։ Այնպես որ այժմ ամեն ոք ասում է՝ ո՛չ, միայն առաջին քայլերն էր դժվար, իսկ այժմ ուղիղ, համարձակորեն կընթանանք առաջ»։ Բաքվի պրոլետարիատի բորբոքած «մեծ հրդեհը» բռնկվեց 1903 թվի հուլիսին, Բաքվի նավթահանքերում մեծ գործադուլ սկսվեց։

Բաքվից ստացված թղթակցության մեջ. որը զետեղված էր «Իսկրայի»

ապրիլյան համարում, խոսվում էր բանվորների քաղաքական ինքնագիտակցության աճման մասին՝ «տեղական բանվորական շարժումը, չնայած իր երիտասարդությանը (գոյություն ունի միայն երկու տարի) կարողացել է արդեն երկու անգամ բացահայտորեն արտահայտել իր բողոքը ընդդեմ ցարական կառավարության, որի ճնշումն առանձնապես զգալի է մեզ համար, ծայրամասցիներիս համար։ Ներկայիս ցույցի նպատակն է՝ պարզ ու բացահայտ ձևով հայտարարել, թե քաղաքականապես որքան հասունացել է մեր պրոլետարիատը և թե ինչպես նա պատրաստ է ամեն մի րոպե Կոմիտեի կոչով փողոց դուրս գալու և սոցիալիզմի ռևոլուցիոն կարմիր դրոշով բացահայտ մարտահրավեր նետելու ինքնակալությանը»։ Բաքվից ստացված հաջորդ թղթակցությունն ավարտվում էր հետևյալ բառերով՝ «սոցիալիզմի գաղափարն ավելի ու ավելի շատ կողմնակիցներ է նվաճում»։

Բաքվի պրոլետարիատի առաջին քայլերին հաջորդեցին ավելի ուժեղ, ավելի վճռական ռևոլուցիոն քայլեր։ 1904 թ. դեկտեմբերին բոլշևիկների Բաքվի կոմիտեի ղեկավարությամբ անցկացվեց Բաքվի բանվորների հսկայական գործադուլը, որը վերջացավ բանվորների հաղթությամբ, բանվորական շարժման մեջ առաջին անգամ կնքվեց կոլեկտիվ պայմանագիր։ Բաքվի գործադուլը ռևոլուցիոն վերելքի սկիզբ հանդիսացավ Անդրկովկասում և Ռուսաստանի մի շարք շրջաններում։ «Բաքվի գործադուլը,— գրել է Ի. Վ. Ստալինը,— ազդանշան ծառայեց ամբողջ Ռուսաստանում հունվար-փետրվարյան պանծալի ելույթների համար»։[1]

Լենինյան «Իսկրայի» էջերում լայն արձագանք գտան Ռուսաստանի հարավի գործադուլները։ «Իսկրան» լուսաբանում էր Վրաստանի և Հայաստանի ռևոլուցիոն շարժումները։ 1902 թվին Անդրկովկասում ստեղծվում է հայ սոցիալ-դեմոկրատների միությունը, որը նույն թվի հոկտեմբերին ստեղծում է իր տպագիր օրգանը՝ «Պրոլետարիատ» թերթը։ «Պրոլետարիատ» թերթը դա լենինյան իսկրայական ուղղության առաջին հայերեն թերթն էր, որի առաջին համարում էլ տպագրվել է միության «Մանիֆեստը»։

Վ. Ի. Լենինը արտասահմանում ծանոթանալով «Պրոլետարիատ» թերթի բովանդակությանը, նրա մասին գրեց հատուկ հոդված, որը տպագրվեց «Իսկրայի» 1903 թ. փետրվարի 1-ի № 33-ում։

Բոգդան Կնունյանցի լենինյան «Իսկրայում» զետեղած բոցաշունչ հոդվածները տալիս են այն ժամանակվա Կովկասի ռևոլուցիոն շարժումների նկարագիրը, հայ աշխատավորության վիճակը։

Լենինյան «Իսկրան» ինտերնացիոնալիզմի, ժողովուրդների բարեկամության և համագործակցության մունետիկն էր։ Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները և նրանց մամուլը ընկեր Ստալինի գլխավորությամբ բարձր պարզած լենինյան «Իսկրայի» դրոշը՝ հաղթանակեցին։ Լենինյան «Իսկրայի» գործն ու տրադիցիաները ապրում են հանձինս բոլշևիզմի, լենինիզմի, հանձինս սովետական մամուլի և նրա դրոշակակիր «Պրավդայի»։

Այն դրոշը, որի ներքո պայքարում էին «Իսկրան», Ռուսաստանի ու Անդրկովկասի բոլշևիկները, դարձել է մեծ և անպարտելի ուժ։ Այդ դրոշը լենինիզմի դրոշն է, որը հանդիսանում է իմպերիալիզմի դեմ աշխատավոր մասսաների մղած պայքարի և հաղթանակների դրոշ։

[1] Համ Կ(բ)Պ պատմություն, համառոտ դասընթաց, էջ 77, Հայպետհրատ, Երևան, 1946 թ.։